ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Հայաստանի քիմիական հանդես **65, №3, 2012** Химический журнал Армении

ՀՐԱՆՏ ԳՐԻԳՈՐԻ ԲԱԲԱՅԱՆ

(ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ Ճարտարագիտական ակադեմիայի փոխնախագահ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Գրիգորի Բաբայանի 85 տարին: Նա մեր հանրապետության, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության իր բնագավառի ամենաճանաչված գիտնականներից է: Բազում սերունդներ դաստիարակած մեծանուն մանկավարժը վայելում է հարգանք ու պատիվ և բոլորս էլ ուրախ ենք, որ այսօր կարող ենք շնորհավորել շնորհաշատ մարդուն ծննդյան 85-ամյակի առթիվ:

Հրանտ Գրիգորի Բաբայանը ծնվել է 1927 թ. քաղաք Երևանում: 1952 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական տեխնոլոգիայի ֆակուլտետը և ընդունվել ԽՍՀՄ ԳԱ Ն.Ս. Կուռնակովի անվան Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի ասպիրանտուրան Ֆիզիկաքիմիական անալիզ մասնագիտությամբ:

Թեկնածուական ատենախոսությունը հաջող պաշտպանելուց հետո Հ.Գ. Բաբայանը վերադարձել է Երևան և սկսել աշխատել ՀԽՍՀ ԳԱ Քիմիայի ինստիտուտում որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող, գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Քիմիայի ինստիտուտում նա առաջինն է ստեղծել Ֆիզիկաքիմիական անալիզի լաբորատորիա, համալրել երիտասարդ կադրերով և դրանով իսկ հանրապետությունում հիմնադրել նոր գիտական ուղղություն:

Լաբորատորիայում կատարել են սիլիկատների քիմիայի բնագավառին վերաբերվող բազմակողմանի լուրջ և սիստեմատիկ հետազոտություններ, որոնք թույլ տվեցին պարզել քիմիական փոխազդեցությունների բնույթը բարդ սիլիկատային և ֆտորիդային համակարգերում: Գիտնականի երկարամյա աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին նրա դոկտորական դիսերտացիայում, որը նա հաջողությամբ պաշտպանեց 1966 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտական խորհրդում և որն իրավամբ համարվեց լուրջ ներդրում սիլիկատների քիմիայի բնագավառում: Նույն թվականին Հ.Գ. Բաբայանը հրավիրվում է Երևանի պետական համալսարան դասախոսություններ կարդալու, իսկ 1969 թ. ընտրվում է

համալսարանի քիմիայի ֆակուլտետի անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ: Նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Համալսարանում ուսումնամանկավարժական աշխատանքներին զուգահեռ պրոֆ. Հ.Գ. Բաբայանը, համախմբելով իր շուրջ ամբիոնի աշխատողներին հանրապետության տարբեր ձեռնարկություններին օգնություն ցուցաբերելու նպատակով, գիտահետազոտական աշխատանքներ է ծավալում հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի բնագավառում: Կատարված հետազոտությունների կարևորությունը և արդյունավետությունը թույլ տվեցին 1971 թ. ԵՊՀ-ում անօրգանական քիմիայի ամբիոնին կից ստեղծել նոր գիտահետազոտական օջախ՝ հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և տեխնոլոգիայի ճյուղային լաբորատորիա, որի գիտական ղեկավարն էր պրոֆ. Հ.Գ. Բաբայանը: Այդ լաբորատորիայում տարված ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր դարձավ հետազոտել խոշոր հանքավայրերի և հանրապետության ձեռնարկությունների արտադրական թափոնների կոմպլեքս վերամշակման մի շարք եղանակներ: Պետք է նշել, որ մի շարք ավարտված աշխատանքներ փորձարկվել են կիսաարդյունաբերական եղանակով:

Պրոֆ. Հ.Գ.Բաբայանի ղեկավարությամբ անօրգանական քիմիայի ամբիոնում կատարվել են լուրջ ուսումնասիրություններ ժամանակակից քիմիայի բնագավառում: Լայն արձագանք են ստացել պրոֆ. Հ.Գ. Բաբայանի հետևյալ աշխատանքները. ջուր-աղ համակարգեր, բազմաբաղադրիչ համակարգերի հալույթային դիագրամներ, որոնք պարունակում են ալկալիական և հողալկալիական տարրերի բարդ ֆտորիդներ, տեսական մշակումներ քիմիական կապի և բյուրեղահիդրատների կառուցվածքի վերաբերյալ:

1983թ. հոկտեմբերից պրոֆ. Հ.Գ. Բաբայանը ղեկավարել է □Քար և սիլիկատներ□ գիտաարտադրական միավորումը: Նրա ղեկավարությամբ այստեղ ստեղծվել է նոր գիտական ուղղություն բնական հումքի կոմպլեքսային օգտագործումով՝այդ թվում պեռլիտների մշակում, տուֆի, պեմզայի, գրանիտի վերամշակում, որոնց հիման վրա ստացվել են կատալիզատորային կրիչներ, հղկող փոշիներ, մաքրող քիմիական նյութեր և այլն: Կարճ ժամկետում պրոֆ. Հ.Գ. Բաբայանի օգնությամբ և ղեկավարությամբ ստեղծվեց հաշվիչ կենտրոն և աշխատանքներ սկսվեցին բնական քարերի հումքերի տվյալների բանկ կազմելու ուղղությամբ, թողարկվեցին մի շարք փորձաարդյունաբերական գծեր:

Պրոֆ. Հ.Գ. Բաբայանը մեծ օգնություն է ցուցաբերել Հայաստանի դպրոցներին՝ դասախոսություններով ելույթ ունենալով աշակերտների առջև: Երկար տարիներ նա եղել է դպրոցականների հանրապետական քիմիայի օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ, իսկ 1980 թ.՝ Երևանում կազմակերպված դպրոցականների Համամիութենական քիմիայի օլիմպիադայի հանձնաժողովի նախագահ:

ԵՊՀ և ԵՊԻ քիմիական ֆակուլտետներում, կարդալով դասախոսություններ տեսական քիմիայի, ֆիզիկաքիմիական անալիզի և անօրգանական քիմիայի առարկաներից, պրոֆ. Հ.Գ. Բաբայանը մեծ ուշադրություն դարձրեց հայերեն լեզվով ուսումնամեթոդական ձեռնարկներ ստեղծելուն: Նրա ղեկավարությամբ պատրաստվեց տպագրության հայերեն լեզվով ֆիզիկաքիմիա-

կան անալիզի ուսումնական ձեռնարկը, խմբագրվել է ընդհանուր և անօրգանական քիմիայի ձեռնարկը:

Մեծ է պրոֆ. Հ.Գ. Բաբայանի վաստակը բարձրակարգ գիտական մասնագետների պատրաստման գործում: Նրա ղեկավարությամբ 50-ից ավելի գիտական աշխատողներ և ասպիրանտներ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունը, իսկ մի քանիսը նաև դոկտորական թեզեր: Պրոֆ. Հ.Գ. Բաբայանը 200-ից ավելի տպագրված աշխատանքների հեղինակ է և ունի հեղինակային իրավունքի բազմաթիվ վկայականներ:

Նա ԽՍՀՄ ԳԱ նախագահությանը կից ֆիզիկաքիմիական անալիզի և բյուրեղացման պրոցեսների բաժանմունքի գիտական խորհրդի անդամ էր, ԽՍՀՄ Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության մինիստրության գիտամեթոդական բաժանմունքի կոմիտեի անդամ, Դ.Ի Մենդելեևի անվան Միութենական քիմիական ընկերության կառավարման կենտրոնական խորհրդի անդամ, Խորհրդային Հայաստանի գիտատեխնիկական ընկերության խորհրդի անդամ և քիմիական գիտությունների գիտական աստիճանի շնորհման երկու գիտական խորհուրդների՝ ԵՊՀ և ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի (ք. Մոսկվա) անդամ, □Հայաստանի հանրագիտարանի□ խմբագրական կոլեգիայի անդամ, պարգևատրվել է ակադեմիկոս Ն.Ս. Կուռնակովի հոբելյանական մեդալով: Այսօր էլ պրոֆ. Հ.Գ. Բաբայանը ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի անդամ է:

Երկար տարիներ լինելով Դ.Ի. Մենդելեևի անվ. Համամիութենական քիմիական ընկերության Հայաստանի բաժանմունքի նախագահ, պրոֆ. Հ.Գ. Բաբայանը կազմակերպել է անօրգանական քիմիայի և քրոմատոգրաֆիայի ամենամյա 14 հանրապետական խորհրդակցություններ: Նրա ղեկավարությամբ համալսարանում կատարված հետազոտությունների արդյունքները թույլ տվեցին 1978 և 1981 թթ. կազմակերպել հազվագյուտ և ցրված տարրերի քիմիայի և քիմիական տեխնոլոգիայի I և II Համամիութենական խորհրդակցությունները, որոնց կազմկոմիտեի նախագահն էր պրոֆ. Հ.Գ. Բաբայանը:

1975, 1976 և 1978 թթ. պրոֆ. Հ.Գ. Բաբայանը հրավիրվել է Լյուբլինի Մ. Սկլադովսկու անվ. Համալսարան՝ Ֆիզիկաքիմիական անալիզի վերաբերյալ դասախոսություններ կարդալու համար:

Մեծարգո Հրանտ Գրիգորի Բաբայան, ՀՀ քիմիական հասարակությունը և Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի կոլեկտիվը շնորհավորում են Ձեր ծննդյան 85-ամյակը և ցանկանում երկար տարիների ստեղծագործական հաջողություններ և բարօրություն:

<<Հայաստանի քիմիական հանդեսի>> խմբագական կոլեգիան միանում է բոլոր շնորհավորանքներին ու բարի ցանկություններին: